«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

Առարկան՝ Քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Երանոսյան

Ուսումնական հաստատություն՝ Հ. Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Էկոլոգիական կրթություն
3. Էկոլոգիական դաստիարակություն, նպատակը
4. Գլոբալ հիմնախնդիրներ
5. Էկոլոգիական գիտակցության ձևավորում
6. Եզրակացություն
7. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ աշակերտների մոտ ձևավորել կարծիք բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Երեխան պետք է հասկանա, որ էկոլոգիական գործունեությունից է կախված մեր վաղվա օրը, մեր երկրի բարեկեցությունը, բույսերի, կենդանիների կյանքը:

Գիտատեխնիկական առաջընթացը մեզանից պահանջում է լուրջ մոտեցումներ՝ էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառներում: Աշխատանքի նպատակն է վեր հանել էկոլոգիական համամարդկային խնդիրները, առաջ քաշել դրանց լուծման ճանապարհներ: Մարդը՝ թևակոխելով տեխնոկրատական դարաշրջան, հակասությունների մեջ է մտել բնության հետ, օգտագործելով բնությունը նա գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները:

Էկոլոգիական կրթություն և դաստիարակություն ստանալով սովորողը դառնալու է էկոլոգիապես գրագետ, պայքարող, լուծումներ առաջարկող սերունդ:

Այս միտքը կարող է լինել որպես պարադոքս, բայց մեր նպատակն է լուծել բնապահպանական հրատապ պրոբլեմը. մեր տեսակի պահպանությունը հենց մեզնից:

Բանական մարդուն պետք է պաշտպանել արտադրող մարդուց:

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Վերջին տարիներին շատ է օգտագործվում «բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիր » հասկացությունը: Եվ նա դարձել է մարդկության գլխավոր հիմնախնդիր մնացած հիմնախնդիրների կողքին:

21-րդ դարում ավելի են մեծացել մարդկության սպառողական պահանջները բնական ռեսուրսների նկատմամբ, վերջինս պայմանավորված է երկրագնդում բնակչության քանակի կտրուկ աճով:

Մարդը գոյատևում և ապահովում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով բնության բարիքներից: Մարդու վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ ի սկզբանե եղել է սպառողական, բայց այդ միջավայրի վրա այնպիսի ծավալներ է ընդունել, որ խախտվել է ինքնակարգավորման և ինքնազգացման ընթացքը վերջին 30 տարվա ընթացքում բնությունից կորզվել և օգտագործվել է այնքան նյութական պաշար, որքան նախորդ 5000տարվա ընթացքում:

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրների աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին :

Վերջին 50 տարիների ընթացքում կիսաանապատային և տափաստանային տարածքների յուրացման հետևանքով իրենց բնակավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, կենդանիներ անձրևների սակավության պատճառով պակասել են գետերի, լճերի ջրի պաշարները, որն էլ բերել է ջրային կենդանիների և նրանցով սնվողների գլխաքանակի կտրուկ անկման:

Անտառների ոչ ճիշտ շահագործման ապօրինին ծառահատումները բերում են ոչ միայն կենդանական աշխահի մեծ մասշտաբների հասնող կորստի այլ նաև օդային ավազանի մաքրության որակի անկմանը: Անտառափայտը շինարարական լայնամասշտաբ կիրառման հետևանքով բերում աղետալի վնասների:

Հայաստանում զգալիորեն ախտոտված են օդային և ջրային ավազանները: Դրա վրա մեծ ազդեցություն է թողնում մետաղամշակման արտադրությունները, որոնք վտանգավոր են իրենց թափոններով և արտանետած արտադրական գազերով, ծանր մետաղներով:

Օրեցօր լայն թափ հավաքող շինարարության, ավելացող ավտոմեքենաների արտանետումները բացասաբար են անդրադառնում շրջակա միջավայրի պահպանության վրա և սպառնում են ոչնչացնել առկա կենսահամակարգերը: Մեր բնաշխարհի վրա խիստ բացասական ազդեցություն են թողնում ցեմենտի արտադրությունները, Արմավիրի ատոմակայանը, գործող ՋԷԿերը, քիմիական գործարանները ոչ ճիշտ աղբի հավաքման և վերամշակման գործընթացները:

Մեր երկրում բնապահպանության խնդիրները լուծելու, կենսաբազմազանության պահպանության և կենսապաշարների խելամիտ օգտագործման նպատակով մշակվում է ՀՀ կենսաբազմազանության պահպանության ռազմավարություն: Այն խիստ բազմակողմանի և ծավալուն փաստաթուղթ է, որը ներառում է ինչպես բնաշխարհի վրա մարդահարույց վնասակար գործոնների նվազեցման, էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիական կրթության ու գիտության զարգացման, հատուկ պահպանվող տարածքների ցանցի ընդլայնման, այնպես էլ այդ ոլորտի օրենսդրական դաշտի հետագա ամբողջացման ու կատարելագործման հարցեր: Այս օբյեկտիվ պայմաններում անհրաժեշտ է հասարակության անդամների, առաջին հերթին աճող սերնդի, հոգեբանական, գիտակցական, աշխարհհայացքային, արժեքային վերակառուցումը բնության նկատմամբ, որը պետք է դառնա կրթության բովանդակության և դաստիարակության անքակտելի մասը: Բնականաբար, այս գործում գլխավոր դերը պատկանում է հանրակրթական դպրոցին, բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներին:

Կյանքը դպրոցից պահանջում է չբավարարել առանձին էկոլոգիական դաստիարակչական աշխատանքներով, այլ ծավալել անընդհատ բնապահպանական համակարգված և նպատակաուղղված գործողություններ և քարոզչություն:

Եթե երեխան, դեռահասը հասկանա, որ իր բարեկեցությունը, վաղվա օրը, իր և իր մերձավորներիր, ընկերների երջանկությունը կախված է օդի, ջրի մաքրությունից, գետին,

պուրակին, թփին կոնկրետ օգնություն ցույց տալուց, նա կդառնա բնության պաշտպան ու բարեկամ:

Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանն անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության փրկարարի բարդույթից:

Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն այն հիմնական ոլորտն է, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացմանը:

Էկոլոգիական կրթությունը մշակույթի նոր բնագավառ է, էկոլոգիական գիտակցության նոր ձև: Այս երկու հասկացությունները ծնվել են այն ժամանակաշրջանում, երբ մարդկությունը գիտակցեց, որ էկոլոգիան գիտություն է կյանքի վերարտադրման, դրա երկրաբանական, կենսասոցիալական գործոնների մասին:

Մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունը պետք է գիտակցվի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև բարոյական, դաստիարակչական, կրթական առումներով, և ինչպես նշում է Ն. Մոիսեևան «պահանջում է մարդկությունից գիտակցելու բարոյական խնդիրների լուծման առաջնահերթության անհրաժեշտությունը՝ տեխնոլոգիական խնդիրների համեմատությամբ, և ձևավորելու համամարդկային տիեզերական բարոյականություն՝ յուրացնելով էկոլոգիական այնպայմանական պահանջը՝ մի' վնասիր կենսոլորտը» (33,5-8)

Էկոլոգիական դաստիարակության գիտական իմացությունը նոր ուղղություն է մանկավարժության մեջ, այն պայմանավորված է հասարակական, սոցիալտնտեսական փոփոխություններով: Ժամանակի թելադրանքով պահանջ է առաջացել աճող սերնդին ծանոթացնել շրջակա միջավայրի հետ հաղորդակցվելու կուլտուրական ձևերին՝ հիմնված մարդու բնության վիճակի հետ՝ համապատասխանեցված գործողությունների և վարքի սկզբունքի վրա:

Ժամանակակից աշխարհն ապրում է իր զարգացման ծանր շրջանը: Տեխնոկրատական քաղաքականությունը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների՝ օգտագործելով բնությունը, մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները՝ կորցրածը վերականգնելու առումով:

Շրջակա միջավայրի վիճակի այսպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը, ըստ էության, կրում է աշխարհհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ:

Իսկ դա նշանակում է, որ էկոլոգիական աղետի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը որպես զուտ կենսաապահովման միջոց դիտարկելու առժեքային կողմնորոշման վերափոխումն է:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախման մեջ է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ:

Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության կուլտուրայի պատվաստման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովվում է անձի հոգևոր –բարոյական հասունացումը՝ նպաստելով նրա բնության հետ ունեցած հարաբերությունների ներդաշնակությանը և որոշում հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարները:

Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից, և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը էկոլոգիական իմաստով հասունացնում է անձին շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած հարաբերություններում՝ իմացական հուզազգացմունքային և նորմատիվային մակարդակներում: Արդյունքում դաստիարակության օբյեկտը՝ անձը, բնօգտագործողի իր

դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝ հաղթահարելով բարդույթը, որ կոմնորոշված է մարդու բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ:

Ժամանակակից դպրոցականի հետ աշխատելիս պետք է հաշվի առնել, որ նրա մոտ բնության նկատմամբ սերը էկոլոգիական գիտակցությունն ու գիտելիքները ձևավորվում են բնագիտական առարկաների՝ կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության ժամերին:Նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելու համար պետք է խոսել փաստերով, նկարներով, ֆիլմերով, որոնց ծանոթանալով աշակերտը ավելի կարժևորի ցանկացած հիմնախնդիր, որի մասին ուսուցիչը խոսում է:

Օրինակ՝գլոբալ տաքացում- երկրի կլիմայական համակարգի միջին ջերմաստրճանի բարձրացում:Խոսում ենք փաստերով՝ 20-րդ դարից սկսած օդի միջին ջերմաստիճանը բարձրացել է 0.74 °C-ով, որի մոտավորապես երկու երրորդն ավելացել է 1980 թվականից հետո: Վերջին յուրաքանչյուր հաջորդ տասնամյակն ավելի տաք է եղել նախորդից: Մարդկային գործոնով պայմանավորված, ջերմաստիճանային փոփոխության մեծ մասը ջերմոցային, գազերի խտության մեծացումն է: Բազմաթիվ գիատական հետազոտություններ ապացուցում է մարդու ազդեցությունը մթնոլորտի և օվկիանոսի ջերամաստիճանի բարձրացման ջրաբնական ցիկլի գլոբալ փոփոխության, սառույցի և ձյան քանակության քչացման, ծովի միջին մակարդակի գլոբալ բարձրացման վրա:

Տաքացումը ամենից ուժեղ արտահայտվում է Արկտիկայում,այն բերում է սառցադաշտերի մակերեսի փոքրացման, որը լի է ցամաքի հեղեղման վտանգներով:

Գլոբալ տաքացումը բերում է իր հետ նաև անապատացման և մարդկությանը սպառնում է երաշտով, անապատացմամբ, իսկ վերջինները հանգեցնում են սննդի պաշարների քանակի կտրուկ անկման:

Միակ ճանապարհը այս ամենը կանխելու համար բոլոր երկրների միավորվելն ու միասնական լուծումներ գտնելն է : 1997 թվականին 192 երկիր միասին ստորագրեցին Կիոտյան միջազգային պայմանագիր և այն ուժի մեջ է մտել 2005 թվականին:Պայմանագրի նպատակն է մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիայի կրճատումը:

Տաքացման հետևանքները լի են բնական աղետներով և մարդը սպառել է բնության <<կեղեքման>> իր լիմիտը:

Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը՝ մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները:Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն՝ թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի և տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածին պարունակությունից է կախված երկրի մակերևույթի ջերմությունը:

Օդը, գետերը, ծովերը գնալով ավելի ու ավելի մեծ չափերով են աղտոտվում, հողը թունավորվում է քիմիկատներով, անտառներն ու կենդանական աշխարհը կործանվում են մոնոպոլիաների տիրապետության հետևանքով: Արդյունաբերական ձեռնարկությունները՝ գետեր,լճեր ու ծովեր են թափվում հարյուր հազարավոր տոննա զանազան քիմիական նյութեր և նավթամթերքներ: Դրա հետևանքով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը:

Մարդը պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա բնության չափազանց լիակատար և ամբողջական վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա: Բնական պաշարների արդյունավետ օգտագործումը ամենևին էլ չի նշանակում դրանց լրիվ կողոպտում կամ բնության լիակատար փոփոխություն:

Ելնելով ժամանակի հրամայական պահանջից՝ անհրաժեշտ է կատարելագործել էկոլոգիական կրթության և դաստիարակության բովանդակությունը, որպեսզի մեր սովորողները լինեն էկոլոգիապես գրագետ մարդիկ: Էկոլոգիական դաստիարակությունը պահանջում է, որ աշակերտը հմտություններ ձեռք բերի բնության հետ շփվելու համար, գիտակցաբար հոգա բնապահպանական պրոբլեմները, հասկանա էկոլոգիական փոխկապակցությունը, նախատեսի և ընտրի նրա վրա մարդու ազդեցության օպտիմալ եղանակներ:

Վերջին ամիսներին մեծ ոգեվորություն է նկատվում նախագծային աշխատանքներ կատարելիս: Ուսուցիչը պետք է կարողանա տեսական գիտելիքները սերտաճեցնել գործնականի հետ, օգտագործի բոլոր հնարավոր միջոցները սովորողին բնության հետ շփվելու, արտադրանք ստեղծելու, որը կլինի, օրինակ, էկոլոգիապես մաքուր:

Պետք է անցկացնել միջառարկայական դասեր, կենդանի քննարկումներ, բանավեճեր, արտադասարանական, դաշտային պրակտիկաներ, արշավներ, որտեղ սովորողները առավել կկապվեն բնությանը, կկարողանան օգտագործել իրենց ստացած բնագիտական գիտելիքները:

Կարևոր են այն դպրոցների փորձի և գործունեության ուսումնասիրությունները, որոնք ունեն բնության անմիջական մշակման անկյուններ, մշակում են այգիներ, հողամասեր: Այդպիսի դպրոցում եղել ենք մենք փորձի փոխանակման շրջանակներում: Այն Արմավիրի մարզի Գետաշեն գյուղի էկոդպրոցն էր, որը գտնվում է Մասիս լեռան փեշերին և կարծես <<դրախտ>> լիներ: Յուրաքանչյուր ծառ ուներ իր խնամող աշակերտը, դպրոցում կար կաթիլային ջերմոցներ, սնկանոց, հրաշք ծաղկանոց և այսպես շարունակ: Իրենց աճեցրած բերքից չրեր էին պատրաստել, պահածոյացրել էին տարբեր մրգեր, վաճառում էին սունկը և գումարը ներդնում այլ գաղափարի մեջ:

Հայտնի մանկավարժ Վ.Ա. Սուխոմլինսկին ասել է, որ բնության հետ շփման գործընթացում է ձևավորվում դպրոցականների մտավոր զարգացման և բարոյական հարստացման միասնությունը: Նա նշում էր, որ դպրոցականի մոտ հոգատար վերաբերմունք դեպի բնությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե նա շրջակա միջավայրը բարեկարգում է իր աշխատանքով, և եթե երեխան հրճվում է բնության գեղեցկությամբ և այն վերաստեղծում է իր ձեռքերով, նա չի կարող չար, ստոր և ցինիկ լինել:

Յուրաքանչյուր մարդու մոտ հայրենի բնության գաղափարը կապված է հայրենիքի հետ:

Բնության պահպանության կարողությունների և հմտությունների ձևավորումը իր մեջ դաստիրակչական մեծ բովանդակություն է պարունակում:

Էկոլոգիական դաստիրակության կարևոր գործոն է համարվում նաև անձի կողմից բնության և հասարակության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է բարոյակամային որակների, համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում:

Էկոլոգիական դաստիրակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհհայացքի ձևավորմանը,այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր

միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհհայացքի կառուցվածքի մեջ:

<<Գիտական աշխարհհայացքի ձևավորման գործընթացը՝ որպես դաստիարակության հիմք,կոչված է ամրապնդելու անհատի էկոլոգիական դաստիրակության բազան,- նշում է Վ.Ս.Լիպիցկին,-կարելի է ասել, որ սոցիալ-էկոլոգիական իդեալը որպես բնական միջավայր և հասարակության փոխազդեցության վերաբերյալ որոշակի կեցություն, մտնում է անձի աշխարհհայացքի բովանդակության մեջ>>(31,387):

Իր հերթին անձի գիտական աշխարհհայացքի ձևավորման գործընթացը անհրաժեշտաբար ենթադրում է էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի կատարելագործում մարդու սոցիալական կենսագործունեության և դաստիարակության համակարգում, նրա մեթոդական և աշխարհհայացքային դերի բացահայտում:

Գիտական աշխարհհայացքի տարրերի թվին են պատկանում արժեքային կեղմնորոշումները:

Այդպիսի սոցիալական նշանակություն է ստանում նաև վերաբերմունքը նաև բնությունը և նրա արժեքավորումը, այդ թվում մարդու տարաբնույթ պահանջմունքների բավարարումը՝ իմացական, բարոյական, գեղագիտական, գործնական և այլն:

Հասարակության առաջընթացը ենթադրում է մարդկանց ակտիվ դիրքորոշում, ինքնակազմակերպում, պարտքի և պատասխանատվության բարձր գիտակցում:

Պատասխանատվությունը միառժամանակ կարելի է դիտարկել որպես անձի բարոյական գործունեության համապատասխանատվության աստիճանի իր պարտքի և իրավունքի հանդեպ:

Այսօրվա դպրոցականը պարտավոր չէ այդ պատասխանատվությոանը և ինքնուրույնությոանը, դրանց նկատմամբ եղած պահանջներին, որոնք հասարակությունը ներկայացնում է նրանց, և որը հատուկ է մեծերին:

Այդ առումով հատուկ նշանակություն է ստանում դպրոցականների էկոլոգիական դաստիարակությունը, որը ուղղված է շրջակա միջավայրի և մարդկանց նկատմամբ պատասխանատվության ձևավորմանը:

Կարևոր է նաև էկոլոգիական դաստիարակությունը գեղագիտական տեսանկյունից:Դրա ձևավորմանը արդյունավետ նպաստում են գրական ստեղծագործությունները, կինոներ, բանավեճեր, զրույցներ, փաստավավերագրական ֆիլմերը և այլն:

Գիտամանկավարժական գրականության մեջ սահմանված էկոլոգիական դաստիարակության նպատակը հետևյալն է.

1. Բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:
2. Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ որպես ամենօրյա վարքի կանոն:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են՝

ա) դպրոցականների կողմից այն առաջատար գաղափարների և հիմնական հասկացությունների ու գիտելիքների յուրացումը, որոնց հիման վրա բնության օրենքներին համապատասխան որոշակիացվում է մարդու ներգործությունը բնության վրա,

բ) բնության սոցիալ-տնտեսական առողջարարահիգենիկ և հոգևոր գեղագիտական արժեքների իմացությունը,

գ) սովորողների բնաճանաչողական, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը:

դ) բնության նկատմամբ ակտիվ դիրքորոշման վարքի նորմերի պահպանումը, պարտքի և պատասխանատվության զգացման պատվաստումը,

ե) բնական միջավայրի ստեղծագործական ունակություններ մշակումը՝ բնության հավասարակշռությունը վերականգնելու առումով, բնապահպանական գաղափարների քարոզչություն է:

Բնականաբար, էկոլոգիական դաստիրակության նպատակն ու խնդիրները պայմանավորված են էկոլոգիական դաստիարակության օրինաչափություններով և սկզբունքներով:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպելու համար պետք է առանձնացնել.

ա) քաղաքացիական պատասխանատվությունը,

բ) աշխարհհայացքային նշանակությունը,

գ) բարոյագիտական ազդեցությունը,

դ) ակտիվ պրակտիկ գործունեությունը,

ե) գիատական գիտելիքների համադրումը բնության, պահպանության գաղափարի գեղարվեստազգացմունքային բացահայտման հետ:

զ) էկոլոգիական կրթության և դաստիարակության սկզբունքը, որի կենսագործելու կարևոր միջոցը էկոլոգիական քարոզչությունն է և որի ընթացքում պետք է հաշվի առնել հիմնական գործոններ:

1. Տարերայնորեն ձևավորված էկոլոգիական գիտակցության փոփոխումը,
2. Անձի բնության հետ շփվելու պահանջմունքների առկայությունը,
3. Բնության հուզագեղարվեստական ընկալման առկայությունը, որի հիման վրա ձևավորվում են բնության հետ հարաբերակցության գեղարվեստական որակներ:

Ժամանակակից էկոլոգիական գիտությունը ձգտում է գիտականորեն հիմնավորել կենսոլորտի վերակառուցումը ի օգուտ մարդկանց:

Ըստ Վ.Ի.Վերնադկու՝ գիտության ոլորտի (նոոսֆերայի) զարգացումը ենթադրում է ոչ միայն սոցիալական և բնական երևույթների ներդաշնակ միացություն, այլ առաջին հերթին, մարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների իրականացում՝ հավասարության, ճշմարտության և բարության իդեալի հիման վրա(15,24):

Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման, նրանց շրջակա միջավայրի հետ իրենց հետաքրքրությունների մերձավոր գոտում ընտրած հարաբերակցության և իմաստավորման գործընթացում ձևավորվում են էկոլոգիական համոզմունքները, որոնք որպես հոգեկան երևույթ և աշխարհհայացքային տարր, իրենցից ներկայացնում են շրջակա միջավայրի հասարակության վերաբերյալ մարդու գիտելիքների ճշմարտացիության հաստատուն համոզվածությունը: Դրանք ինչպես և բարոյակամային որակները համարվում են մարդու հատուկ և կարևոր անձնային որակները՝ իրենց մեջ ներառելով հոգեկանի դրդապատճառային, հուզական կողմերը, որոնք իրականացվում են << Մարդ-հասարակություն-բնություն>> հարաբերակցության համակարգում:

Էկոլոգիական գիտակցություն ասելով՝ մենք հասկանում ենք իրականության հոգեկան արտացոլման ասպեկտները, որոնք կապված են <<հասարակություն-բնություն>> համակարգում, փոխազդեցությունների վերաբերյալ պատկերացումների և գիտելիքների, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի նկատմամբ վերաբերմունքի, համապատասխան վարքային և հուզական դիրքորոշումների հետ:

Էկոլոգիական դաստիարակությունը, դաստիարակության մյուս ձևերից որոշակի տարբերվում են իր հետևյալ առանձնահատկություններով.

1. Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը պահանջում են համալիր մոտեցում, քանի որ այն բազմատեսանկյուն գործընթաց է, սոցիալական տեղեկատվության և դաստիարակչական աշխատանքների ներգործությունը ընթանում է միաժամանակ երկու ուղղություններով, երկու մակարդակներով՝ բնական և զգացմունքային, որն իր մեջ ներառում է՝

   ա) բնության և հասարակության մասին գիտելիքների համակարգի ձևավորումը,

   բ) անձի մարդասիրական աշխարհազարգացման դաստիարակումը՝ մարդու հուզումնազգացմունքային ոլորտի ձևավորումը,

   գ) կամային որակների ձևավորումը, առանց որի անհնարին է գիտելիքների ձեռքբերումը և կիրառումը կյանքում:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը պահանջում են միջառարկայական մոտեցում, գիտելիքների միավորում, որը միտված է իր մեջ ներառելու աշխարհհայացքային, քաղաքական, բարոյական, սոցիալական, իրավական, գեղագիտական և մարդու անհատականության ձևավորման այլ տեսանկյունները:

Կիրառելով միջառարկայական կապերը կարելի է բազմակողմանի, գիտականորեն հիմնավորել էկոլոգիական, բնապահպանական հիմնախնդիրները:

Բնագիտական առակաները դասավանդելիս պետք է դպրոցականի մոտ ներմուծել, որ կենսոլորտը եզակի է և ամբողջական:

Դպրոցականնորի ուսուցման ծրագրային նյութերում պետք է արտացոլված լինեն մարդու ազդեցության և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Պետք է համոզել, որ հհնարավոր է պրակտիկորեն լուծել բնապահպանական խնդիրները: Անհրաժեշտ է դրսևորել բարձր

գիտակցություն, ա-եցնել բույսեր, խնամել կենդանիներին, ցուցաբերել հայրենասիրական մոտեցում բնության, իրենց քաղաքի, բնակավայրի նկատմամբ և գործնական աշխատանքների միջոցով կատարելագործել բնապահպանական հմտություններն ու կարողությունները:

Էկոլոգիական գիտելիքներն ամբողջացնելու համար անհրաժեշտ է դպրոցում խորացնել բնագիտական, սոցիալ-քաղաքացիական, տեխնիկական, փիլիսոփայական գիտելիքներ և ավելի խորացնել արժեքային կողմնորոշումները:Հայրենագիտական մոտեցումն օրգանապես կապված է աշակերտների քաղաքացիական, հայրենասիրական պարտքի դաստիարակման հետ:

Ներկայիս հասարակությունը համարվում է արդյունաբերական, և այդ հասարակությանն անհրաժեշտ է էկոլոգիական մտածողություն: Ժամանակակից գիտությունն ապացուցել է, որ միայն համակարգային վերլուծությունն է հնարավորություն տալիս բնությունը դիտել, ոչ թե որպես նյութերի և էներգիայի խառնահանք, այլ որպես մի ամբողջ գոյացությունների համակարգ:

Բնագիտական առարկաները դասավանդելիս դպրոցականների մոտ անհրաժեշտ է ներմուծել կենսոլորտի ամբողջական և եզակի լինելու գաղափարը:

Այժմ գիտնականները մեր մոլորակի բնությունը դիտում են որպես հսկա համակարգ, որը բաղկացած է մի շարք մակրո և միկրո համակարգերից, որոնք գտնվում են հարաբերական դինամիկ հավասարակշռության մեջ:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիրը այնքան բարդ, բազմատեսանկյուն և նազմամակարդակ է, որ հնարավոր չէ իրականացնել միայն առարկայական ուսուցման գործընթացում՝ կախված, հատկապես, նրա առանձնա-հատկություններից և իրականացման պայմաններից:

Էկոլոգիական դաստիարակության առանձնահատկությունների կառուցվածքը, մարդու ֆիզիկական և հոգևոր կյանքի անընդհատ կապը բնության հետ, էկոլոգիական հիմնախնդիրների քննարկումը ժամանակակից մեծամասշտաբ խնդիր-ների շարքում, կենսոլորտի, գենոֆոնդի խնայողությունը, բնության պաշտ-պանության ուղղվածությունը, շրջակա միջավայրի գեղագիտական և հիգիենիկ արժեքների անվանումը, բնության

պաշարների պլանավորված օգտագործում, ունի այնպիսի բարդ կառուցվածք, որի յուրացումը պահանջում է դպրոցի և ար-տադպրոցական հիմնարկների փոխադարձ կապը:

Արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների յուրահատկությունը ինքնին որոշում է դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, այն է՝ դպրոցականների բնապահպանական, բնաճանաչողական արտաուսումնական գործունեություն, գեղագիտական, բարոյասիրական որակների ձևավորում, որն իրականացվում է նրանց հետաքրքրությունների ու ինքնուրույնության վրա:

Միևնույն ժամանակ արտաուսումնական աշխատանքների էությունը ուսումնական նյութի առավել խորացումն ու զարգացումն է, որի հիմքում ուսուցիչը դնում է երկրագիտական և բնության պահպանման սկզբունքը: Հայրենի բնության էկոլոգիական վիճակների նպատակաուղղվածությունը նշանակալից դեր է խաղում դպրոցականների մեջ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի և բարոյական այլ նորմերի ձևավորման ու յուրացման հարցում: Հետազոտությունները ցույց են տվել, որ արտաուսումնական աշխատանքների գործընթացում էկոլոգիական դաստիարակությունը ընթանում է չորս ուղղություններով.

1. շրջապատող բնության նկատմամբ գիտելիքների խորացում և ընդլայնում,
2. շրջապատող միջավայրի պահպանման, խնամքի և բարելավման կարողությունների հմտությունների ձևավորում ու մշակում, բնության պահպանության քարոզչություն՝ ինքնուրույն գործնական աշխատանքների միջոցով,
3. էկոլոգիական վարքի կուլտուրայի ունակությունների ձևավորում և նրա դրսևորումը բնական միջավայրում, որը կարելի կլինի իրականացնել միայն դպրոցականների ուսումնական և արտաուսումնական գործունեության միասնության պարագայում:
4. Բնության գեղագիտական ընկալման ունակությունների ձևավորում:

Արտադպրոցական պարապմունքների ընթացքում ուսումնասիրելով շրջակա միկջավայրը՝ մարդու և բնության փոխադարձ կապի, կենդանի տպավորությունների հիման վրա դպրոցականների մոտ հիմնավորվում է վարքի կանոնների և նորմերի

նպատակաուղղվածություն, ինչպես նաև վարքի կանոնների և նորմերի նպատակաուղղվածություն, ինհչպես նաև ձեռք բերված գիտելիքների հիրման վար պայմաններ են ստեղծվում էկոլոգիական փորձի և էկոլոգիական որոշումների ընդունման, սոցիալական արեքային կողմնորոշումների և վերաբերմունքի ձևավորման համար:

Բոլոր դեպքերում խմբակավարների նպատակը պետք է լինի այս գործունեության վերջնական արդյունքը՝ դպրոցականների հասարակական-օգտակար էկոլոգիական գործունեությունը:

Դպրոցականների արտաուսումնական, արտադպրոցական գործունեության արդյունավետություն ենթադրում է այդ գործունեության բազմաձև ուղղությունների համադրում՝ հաշվի առնելով, իհարկե, նրանց տարիքային առանձնահատ-կությունները: Օրինակ՝ պատանի բնասերների, խմբակների, բնապահպանական դպրոցական և արտադպրոցական ընկերությունների, ակումբների կազմակերպում, որը թույլ կտա նրանց էկոլոգիական անհատական և խմբակային պատրաստության իրականացում, շրջակա միջավայրի նկատմամբ լրացուցիչ գիտելիքների ձեռքբերում և մասնակցություն բնապահպանական պրակտիկ գործունեության մեջ:

Այս ասպարեզում դպրոցականների գործունեության հաջողությունը կախված է տեղական բնական և տնտեսական պայմանների ստեղծագործական օգ-տագործումից:

Փորձը ցույց է տվել, որ այս աշխատանքների հաջողությանը նպաստում է նաև դպրոցականների բնապահպանական ընկերությունների, պատանի բնասերների կայանի համատեղ աշխատանքը այլ հասարակական բնապահպանական ընկերությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, «Կանաչների միությունը» և այլն:

Ավագ դպրոցականների արտաուսումնական և արտադասարանական էկոլոգիական գործունեության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ դիտումների, գործնական պարպմունքների ընթացքում հրանք ճանաչում են բնությունը իր շարժման, փոփոխությունների մեջ: Այդ պարագայում հատուկ ուշադրություն է դարձվում շրջակա միջավայրի փոփոխությունների գնահատման կարողության զարգացման վրա, որոնք հատկապես տեղի են ունենում մարդու ազդեցության շնորհիվ:

Այդպիսի դիտումները ընթանում են փուլերով, որի ընթացքում տեղի են ունենում նրանց արդյունքների քննարկումներ, որի նպատակն է ձևավորել սովորողների մեջ բնության վրա մարդու ազդեցության էկոլոգիական հետևանքների հնարավոր տարբերակների կանխատեսման ունակություններ:

Խմբակների և արտաուսումնական այլ պարապմունքների ընթացքում մշակվում են էկոլոգիական խնդիրների լուծման հնարավոր միջոցներ, եթե իհարկե, դրանք գտնվում են բարձր դասարանցիների հնարավորությունների մերձավոր գոտում՝ որտեղ և ինչպես ճանապարհ հարթել, ինչպես ընտրել և կահավորել հանգստիվայրը բնության մեջ, ինչպես վերաբերվել տվյալ վայրի կենդանիների հետ, եթե նրանք հգանդիպեն, ինչպես օգտվել և խնայել հանդիպած ջրային պաշարները, ինչպես օգտվել բնության բվարիքներից և այլն:

Եզրակացություն

Ծանոթանալով շրջակա միջավայրի խնդիրների հետ, աշակերտներն ավելի գիտակից մոտեցում կդրսևորեն իրենց կյանքում և ուսման մեջ:

Պետք է շեշտը դնել ուսումնական, արտադպրոցական, բնաճանաչողական բնապահպանական առաջադրանքների և աշխատանքների վրա: Դրանք կարևոր դեր կխաղան էկոլոգիական դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ անմիջականորեն նպաստելով դպրոցականների հուզակամային որակների վրա՝ ապահովելով ինչպես էկոլոգիական դաստիարակության գործընթացի, այնպես էլ նրանց համակողմանի զարգացման համար անհրաժեշտ դաստիարակչական բոլոր ձևավորումն ու զարգացումը:

Կյանքը դպրոցից պահանջում է չբավարարվել էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդլայնում և խորացում, համակարգված աշխատանք և գործողություններ:

Պետք է կատարել գործնական և նախագծային աշխատանքների ձևով :

Եթե կարողանանք սովորողի մոտ ձևավորել էկոլոգիական գործունեություն, պահանջմունք, ակտիվ գործողություններ, դա դրական ազդեցություն կթողնի նրա էկոլոգիական կուլտուրայի, դաստիարակության և կրթության վրա:

Ժամանակակից դպրոցը ուսուցիչներից պահանջում է փոխհամաձայնություն՝ սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գծով աշխատանքների կոլեկտիվ պլանավորման առումով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. Թ., Ավանեսյան Լ. Գ.<<Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում>>2003թ հրատ.:
2. Маисеева Л. В.,, Актуалальные проблемы нравственности,, 1999 г.
3. В. А. Сухомлинский ,,Воспитание детей,,1976 г.
4. В.И. Липицкий ,,Человек, природа, воспитания,, 1977 г